

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

1. ԱՐՄԵՆԻԱ Լինչի. գրեց Պ. Տօնապետեան. Հօն-  
դոն 1902 գ. 1 թ. 25 կ.

Հայաստան երկիրն իւր պատմական անցեալով, աշխարհագրական դիրքով, քաղաքական հանգամանքներով, բնութեան զեղեցկութեամբ և բնական հարստութիւններով վազուց արգէն դրաւել է Եւրոպացի՝ գիտականների ուշադրութիւնը. Վերջին զարերում բազմաթիւ Եւրոպացի ճանապարհորդներ՝ թէ ռազմագէտ, (նշանաւոր ռազմագէտ և վերջը գերմանական զօրքի Ֆէլզմարշալ Մօլտկէ) թէ հնագէտ, թէ պատմաբան և թէ երկրաբան ու աշխարհագրագէտ ալցեւել են մեր երկիրը և համառօտ կամ ընդարձակ աշխատութիւններով նկարագրել իրենց ճանապարհորդութիւնը. Ալդ նկարագրութիւններից շատերը զուտ գիտնական են եղել, շատերն էլ ուղարական թեթև աշխատութիւն՝ ուղիղ կամ սխալ ու վերիվերու դատողութիւններով լի:

Մէկ տարի առաջ Անգլիակում լուս տեսաւ մի նոր աշխատութիւն Հայաստանի մասին, որի հեղինակի անունը թէն շատ քչերին էր լաւանի մինչև ալդ ժամանակ, բայց անուամնակնիւ Եւրոպական քննադատների միաբան վկալութեամբ՝ ալդ երկը ճանաչուեց ամենալի ակատարը մեր հալրենիքի մասին երբեկոյէ լուս տեսած աշխատութիւնների մէջ:

Ալդ աշխատութիւնը Լինչի «Արմենիա և անդ լինչին լեզուով, երկու փառահեղ հատորներ, 984 մեծաղիք էջերով, 197 լուսանկարներով, 15 քարտէզներով» և Հայաստանի մեծ քարտէզով<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Armenia. travels and Studies by H. F. B. LINCH  
գինը 22 մմթ. 50 կու.

Լինչը երկու անգամ է ճանապարհորդել Հայաստանում։ առաջինը 1893 օգոստոսից մինչև 1894 մարտ ամիսը իւր աղ- գական Լինչ հազարապետի հետ և երկրորդ անգամ 1898 մա- յիսից սեպտեմբեր՝ լաւտնի երկրաբան Ասուալդի հետ։ Այս ու- ղևորութիւնների արդիւնքը նա այնպիսի հմտութեամբ, ճշշ- տութեամբ և անկողմանակալութեամբ է նկարագրել, անպիսի բաղմակողմանի և մանրամասն տեղեկութիւններով է ճոխաց- րել, որ գիրքը միաժամանակ կարող է հետաքրքրել թէ զիտ- նականին և թէ բանաէրին, թէ դիւանագէտին և թէ երկրա- բանին ու պատմաբան-աշխարհագրագէտին։ «Արմենիան» ընդ- դրկում է Հայը և Հայաստանն ամրողջապէս։ հայի անցեալը, ներկան, կրօնը, եկեղեցին, քաղաքակրթութիւնը, թերութիւն- ներն ու տռաւելութիւնները, քաղաքական դրութիւնը և ալին նորն հմտութեամբ և ճշտութեամբ է նկարագրում Լինչը, ինչ- պէս և Հայաստանի աշխարհագրութիւնը, կլիման, երկրաբա- նութիւնը և ալլն։ աշխարհազրական քարտէջները ցարժմ եղա- ծից ճիշտ և մանրամասն են։

Հալութեան վերաբերեալ ալս անգնահատելի դրական աշ- խատութիւնը դժբաղդաբար մատչելի չէ մեղ, հակերիս, որով- հետև մնանից շատ քչերն անզիւերէն լեզուին հմուտ լինելու բաղդն ունին։ վերին աստիճանի օգտակար ծառալութիւն ա- ռած կլինէր մեր զրականութեանը, եթէ մեր հարուստներից մէկը լանձնարարէր մի հմուտ անզիւադէտ հալի թարգմանել ալդ աշխատութիւնը հակերէն և հրատարակէր բնագրի, բոլոր շքեղութեամբ։ Գանի որ մեր ասածը լոկ ջերմցանկութիւն է, մենք սիրով ողջունում ենք լարգելի Տօնապետեանի աշխա- տութիւնը, որով նա ծանօթացնում է հալ ընթերցողներին Լինչի «Արմենիալի» բովանդակութեանը։ Տօնապետեանի հրա- տարակած գրքին կցուած է Լինչի լուսատիպ պատկերն (ու- ղևորական զգեստով) և ինքնակենսազրութիւնը, որից իմա- նում ենք, որ Լինչը ծնուել է Լօնդոնում 1862 թ. նրա ծնող- ներն էին ևմէկ կողմից մի հին իրլանդական գերդաստանի մի կրտսեր ուստրը և միւս կողմից սկովտական շառաւիղի մի նշա- նաւոր Հնդկական ղինուորականի մի զուստրը։ «Մեծ հալրս... եղաւ հալր տասնեմէկ արու զաւակների, ալս զաւակներից մէ- կին էր որ Անզիւոլ թագաւորի կողմից լանձնուեցաւ երկրորդ արշաւանքի հրամանատարութիւնը գէպի նփրատ (1837 ու լա- զորդ տարիներ)։ Աս զինուորականը, կապտէն, ապա ծովա-

կալ Վինչ, հրամանառարութեան պաշտօն վարեց առաջին կամ «Զեսնիի» արշաւանքի ընթացքում, կապտէն Լինչ շատ տարիներ անցկացրեց քննելով ու չափելով նիդրատն և Տիգրիսը և այն երկրները որոց մէջով հոսում են ալս պատմական գետերը, իմ հայրը, Թօմաս Կերր. Լինչ, դեռ... ուսանող էր. ի՞ր մեծ եղբար պաշտօնը հրապուրեց իրեն դէպի Արևելք և նա որոշեց միանալ նորան իբր ճանապարհորդ նորա դրօշակակիր նաև ի վրաւ:

...Մեծ հօրս (բաղդադի անզլիական ներկալացուցիչ գընդապետ Թէլլը) ամուսնութեան պատմութիւնը վիպասանական է: Մի իրլանդացի ազնուական՝ Լօրդ Կոնգլըտոն՝ մեկնում է գէպի Արևելք մի առաքելական գործով: Երկու անզլիացիները բարեկամանում են իրար հետ, Առաքելութեան ջանքերը չարաբերութեան մէջ են դնում նորան մի Հալ ընտանիքի հետ—կարծեմ Սվաղցի—որովհետև Հալերը ամեն ժամանակներում ևս սրդիւնաւէտ միջնորդներ են եղել Արևելքի և Արևմուտքի միջև... Շրջապատող հանգամանքը գուցէ աւելի գեղածիծաղ դարձաւ երկու հալ կոլսերի մատաղ գեղեցկութեան չնորհիւ, որոնք, կարծեմ, նոցա Հալ բարեկամների զաւակներն էին, Երկու աղջիկները հարսնութեան խնդրուեցան Հնդկական զինուրականի և Իրլանդացի ազնուականի կողմից, և իմ մալրը աշխարհ եկաւ ալսպիսի մի ամուսնութիւնից: Հալըս սիրահարուեցաւ նորան Բաղդադում, ուր նա լաճախ հիւր էր լինում գնդապետ Թէլլինու:

Ալնուհետև Լինչի հայրը առևտրական գործ է սկսում Քաղզադի հետ և մեր հնդինակն էլ Քէմբըրիջի համալսարանն աւարտելուց յետով իրաւագիտութիւնն է սովորում և ապա հօր առևտրական գործերն է շարունակում Արևելքի հետ. «Ես սովորեցի և ձեռք առի մեր գործերի կառավարութեան զեկը Արևելքի հետ, և զրեթէ բացառապէս ալս հետամտութեան և Արևելեան ճանապարհորդութեան նուիրուեցան կեանքիս տարիները որոց վրալ ալժմ անձկակարոտ չետ եմ նալում...»:

Ինչպէս ասացինք, Լինչի «Ար մենի ի անո երկու հատորից է բաղկացած, առաջին հատորը ուստական Հալաստանին է վերաբերում. պ. Տօնապետեանը հետեւալ հատուածների է բաժանում ալդ հատորը. 1) Երկիրը, 2) աղղաբնակութիւն, 3) ընկերալին, 4) քաղաքական, 5) հալ եկեղեցի, 6) կրօնական և 7) միջին դար:

Երկրորդ հատորը նուիրուած է Տաճկական Հալաստանին, որի բովանդակութիւնը ծօնապետեանը հետեւալ հատուածներով է առաջ բերում. 1) Սահման, 2) հալկական խնդիր, 3) հալկական շարժում, 4) էրզրում, 5) կալսրութիւն Վանալ, 6) Վան և Խրիմեան Հալքիկ, 7) կալսրութիւն Տրապիզոնի.

Այս հատուածների մէջ կան շատ հետաքրքրական դիտողութիւններ և դատողութիւններ, որոնք ճշդիւ հասապատասխանում են իրականութեանը. մեր ընթերցողների ճաշակը գրդաւելու համար առաջ բերենք մի երկու պարբերութիւն. Վինչը ընդհանուր հալութեան թիւը մօտ երեք մի լիօն է համարում, որից միլիօն ու կէսը լուլթանի հպատակ են, ուրոնցից զուցէ մի կէս մի լիօնը բնակւում է Թրքական Հալաստան կոչուած տարածութեան վրայ որ իր մէջ է ներփակում Վանալ, Բիթլիսի, Խարբերդի, Տիգրանակերտի և Էրզրումի արև հինգ նահանդներ... Թրքական Հալաստանի վերոլիշեալ հինգ վիլակէթներում հայ աղջարնակութեան սառւարութիւնը զանազան աստիճանների վրայ է. ալսպէս, մահմեղական բնակիչների թուի հետ համեմատած, Հալերը աւելի մեծ ուժ ունեն Վանալ վիլակէթում քան ո և է ուրիշ տեղում։ Ակստեղ, եթէ զուրս ձգուի Հէքիարիի գաւառը, նոքա զրեթէ մէկերրորդովլ գերազանցում են աղջարնակութեան մահմեղական տարրին. Բուն իսկ Վան քաղաքում Հալերը մօտ ելկուանդամ աւելի են մահմեղականներից. Բիթլիսի վիլակէթում նոքա մնամամանութիւն են Մուշի շրջակալքում, և Բուլանըլսի արգաւանդ գաւառում՝ Վանալ ծովից դէպի հիւսիսային արևմուտք. Միւս կողմանէ, նոքա մահմեղականների թիւից լեռ են մնում Խարբերդի նահանդի մէջ, և Տիգրանակերտի վիլակէթութեան Բալու գաւառում. Էրզրումի կուսակալութեան մէջ հաղիւ գտնուի որ ո է շրջանակ ուր նոքա թուով պակաս չլինեն իրենց մահմեղական հարևաններից, և հաւաքարը վեր առած չորս մահմեղականի դէմ մի հայ է ընկնում... Երկրի ամենաարգասարեր բաժինը Հալերի ձեռքումն է. Վանալ լճի հիանալի շրջակալքը, Բուլանըլսի, Մուշի, և Խարբերդի ընդարձակ դաշտերը բնակուած են Հայ գիւղացիներով, որոնք ոչ միայն մահմեղական գաղթականներից պակաս շարքաշ չեն ալ զեռ նրանցից շատ աւելի աշխատասէր ու լառաջադիմական են. Հալերի ունեցած մի ուրիշ առաւելութիւնն է նոցանպաստաւոր աշխարհագրական դիրքը Քիւրղերի և Թուրքերի

բաղդատմամբ։ Հայ աղքաբնակութիւնը լորինում է աստ տեղ տեղ հոծ և տեղ տեղ ցանցաւ, մի շարալարեալ բաղմամբովս որ սիռուում է սարահարթի մի ծալրից միւսը՝ արևելքից դեպի արևմուտք, և որպէս դուրս ցցուած մի ժայռ անջատում է մահմեղական բնակիչների երկու ճիւղերը իրարուց՝ Գիւր դերին դէպի հարաւ, և թուրքերին դէպի հիւսիս...։ Պէտք է աչքի առաջ ունենալ այն գլխաւոր տեղը, որ Հայերը գրաւում են երկրի տնտեսական ասպարէզում, և չմոռանալ այն լալանի ապացուցը թէ Թուրքիու նահանգների հայ աղքաբնակութիւնը ընդունակ է խիստ արագ աճման ապրուստի բարերար պալմանների տակ։ Եթէ արհեստն ու երկրագործութիւնը տակաւին պահպանում են իրենց խղճալի գոլութիւնը, ալդ նոքապարտական են հայ գիւղացիին...։

Եթէ ցանկանալինք բոլոր հետաքրքրական հատուածներն առաջ բերել պէտք է պ. Տօնապետեանի գրքուկի կէսն արտագրէինք, ուստի խորհուրդ ենք տալիս ընթերցողներին ձեռք բերել ալդ աշխատութիւնը։

Գրքի վերջը կցուած են նշանաւոր արևելագէտների և անդիւկական լուրջ մամուլի քննադատական և գովասանական լուսուածները Լինչի Ալ. Րմեն իալի» մասին, որից երեսում է թէ Բնչպիսի միհանամուռ և չտեսնուած ընդունելութիւն է գտել ալդ շքեղ և իմաստալի աշխատութիւնը։

2. Ն. Ա. ԴՕԲՐՈՂԻԻԲՈՂ. Աղէքսանդր Գավացցի քահանանան եւ իւր քարոզները. Թարզմ. Դէորգ քահ. Մկրոտումնանց. Ս. Պ. Բ. 1902 գ. 25 կ.

Աղէքսանդր Գաւացցին Աստուծու խօսքը քարոզող այն երջանիկ մարդկանցից է, որոնք ընտառու ձիրք ունին անկեղծ ոգեսորութեամբ ժողովրդի հետ խօսելու։ Գաւացցուն ոգեսորող վսեմ գաղափարը հալրենասիրութիւնն էր. Խտալիալի վերածնութեան երջանիկ ժամանակի հարազատ զաւակն էր Գաւացցին և իտալական ազգակին հերոս Գարիբալդիի զինակիցն ու գաղափարակիցը։ Նրա ճարտասան լեզուով ասած քարոզ ճառերը մեծ տպաւորութիւն էին թողնում բաղմաթիւ ունկնդիրների վրայ և նրանց ոգեսորութեան դագաթնակէտին հասցնում։ Նա խօսում էր Խտալիալի աղատութեան և միութեան